

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ
ՀՐԱՄԱՆ

«17»__08__ 2020թ.

No __21__-Ն

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ԻՄՈՒՆԱԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՅԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ ԵՎ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄ» ՍԿ N 3.3.1.003-20 ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ԿԱՆՈՆՆԵՐԸ ԵՎ ՀԻԳԻԵՆԻԿ ՆՈՐՄԱՏԻՎՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ 2008 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 15-Ի N 20-Ն ՀՐԱՄԱՆՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱԶԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 4-րդ հոդվածը, 6-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետը, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածը.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Հաստատել «Հայաստանի Հանրապետության բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպություններում իմունականխարգելման գործընթացի կազմակերպում և իրականացում» ՍԿ 3.3.1.003-20 սանիտարական կանոններն ու հիգիենիկ նորմատիվները՝ համաձայն հավելվածի:
2. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի 2008 թվականի հոկտեմբերի 15-ի «Հայաստանի Հանրապետությունում իմունականխարգելման գործընթացի կազմակերպում և իրականացում» ՍԿ

3.1.6.009-08 սանիտարահամաճարակային կանոնների և նորմերի հաստատման մասին» N 20-Ն հրամանը:

3. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Ա. ԹՈՐՈՍՅԱՆ

 Invalid signature

X 

ԱՐՄԵՆ ԹՈՐՈՍՅԱՆ

Signed by: TOROSYAN ARSEN 3114820360

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ
ՍՊԱՍԱՐԿՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ
ԻՄՈՒՆԱԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՅԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ ԵՎ
ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄ» ՍԿ N 3.3.1.003-20 ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ ԵՎ
ՀԻՓԻԵՆԻԿ ՆՈՐՄԱՏԻՎՆԵՐ

ԲԱԺԻՆ 1
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ
ԳԼՈՒԽ 1
ԿԻՐԱՌՄԱՆ ՈԼՈՐՏ

1.«Հայաստանի Հանրապետության բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպություններում իմունականխարգելման գործընթացի կազմակերպում և իրականացում» սանիտարական կանոնները և հիգիենիկ նորմատիվները (այսուհետ՝ կանոններ և նորմեր) նախատեսված են բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպությունների (այսուհետ՝ ԲԿ) բուժաշխատողների համար, ովքեր իրականացնում են երեխաների, դեռահասաների և մեծահասակների պատվաստումներ:

2. Սույն կանոնները և նորմերը ներառում են Հայաստանի Հանրապետությունում կառավարելի վարակիչ հիվանդությունների (այսուհետ՝ ԿՎՀ) դեմ պատվաստումների իրականացման, բժշկական հակացուցումների և հետպատվաստումային անբարեհաջող դեպքերի վարման, բժշկական իմունակենսաբանական պատրաստուկների (այսուհետ՝ ԲԻԿՊ) պահանջարկի պլանավորման, ստացման, պահպանման, տեղափոխման, հաշվառման, ծախսի, ինչպես նաև բաց սրվակների օգտագործման պահանջները, որոնք ուղղված են ԿՎՀ-ների վերացմանը, ԿՎՀ-ներով հիվանդացության և մահացության, չհիմնավորված հակացուցումների դեպքերի նվազեցմանը, նպատակային քանակակազմերի շրջանում պատվաստումներում ժամանակին (95% և ավել) ու ամբողջական ընդգրկվածության (90% և ավել), ինչպես նաև իմունականխարգելման գործընթացի անվտանգության և արդյունավետության ապահովմանը:

ԳԼՈՒԽ 2
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

3. Ազգաբնակչության շրջանում կանխարգելիչ պատվաստումները կազմակերպվում և իրականացվում են պլանային, ինչպես նաև համաճարակաբանական ցուցումով:
4. Պլանային և համաճարակաբանական ցուցումով կանխարգելիչ պատվաստումներն իրականացվում են այն ԲԿ-ներում, որոնք ունեն «մանկաբուժական ընդհանուր պրակտիկա», «բժշկական ընդհանուր պրակտիկա», «ընտանեկան բժշկություն», «մանկաբարձական», «նեոնատոլոգիական» բժշկական օգնության և սպասարկման տեսակներ իրականացնելու լիցենզիա: Համաճարակաբանական ցուցումով պատվաստումներն իրականացվում են նաև այլ բժշկական օգնության և սպասարկման տեսակներ իրականացնելու լիցենզիա ունեցող ԲԿ-ներում՝ առողջապահության բնագավառում պետական կառավարման լիազոր մարմնի (այսուհետ՝ Լիազոր մարմին) ղեկավարի հրամանով:
5. Պետության կողմից ձեռք բերված պատվաստանյութերը պետության կողմից երաշխավորված անվճար և արտոնյալ պայմաններով պլանային պատվաստումներ իրականացնելու համար տրամադրվում են ՀՀ կառավարության 2004 թվականի մարտի 4-ի թիվ 318-Ն որոշման պահանջների համաձայն պետական պատվեր տեղադրած ԲԿ-ներին:
6. Իմունականխարգելման գործընթացում կանխարգելիչ պատվաստումների կաբինետը խորհրդատվական, կազմակերպամեթոդական և պատվաստումների իրականացման հիմնական միավորն է:
7. Համաճարակաբանական ցուցումով կանխարգելիչ պատվաստումներ իրականացվում են նաև մանկական նախադպրոցական կազմակերպությունների, հանրակրթական, հատուկ կրթական և այլ կազմակերպությունների բուժկետերում՝ Լիազոր մարմնի ղեկավարի հրամանով՝ պահպանելով իմունականխարգելման գործընթացը կարգավորող նորմատիվ իրավական ակտերի և մեթոդական ուղեցույցների պահանջները: Լիազոր մարմնի ղեկավարի հրամանով կանխարգելիչ պատվաստումներ կարող են իրականացվել աշխատավայրում և/կամ ուսումնական կազմակերպությունում՝ պատվաստումային խմբերի միջոցով:
8. Կանխարգելիչ պատվաստումներն իրականացվում են բժշկական հակացուցումներ չունեցող անձանց՝ «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով:
9. Պլանային, ինչպես նաև համաճարակաբանական ցուցումով կանխարգելիչ պատվաստումներն իրականացվում են պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնության և սպասարկման շրջանակներում՝ պետության կողմից ձեռք բերված պատվաստանյութերով, իսկ մնացած բոլոր դեպքերում պատվաստումներն իրականացվում են վճարովի հիմունքներով:
10. Համաճարակաբանական ցուցումով կանխարգելիչ պատվաստումներն իրականացվում են ըստ «Համաճարակաբանական ցուցումներով կանխարգելիչ պատվաստումների իրականացման ցանկի»՝ համաձայն սույն հավելվածի ձև 15-ի:

ԲԱԺԻՆ 2
ՊԱՏՎԱՍՏՈՒՄԱՅԻՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ
ԳԼՈՒԽ 3

ՍՊԱՍԱՐԿՎՈՂ ԱԶԳԱԲՆԱԿԶՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԱՌՈՒՄ

11. Ազգաբնակչության հաշվառումն իրականացվում է՝ համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մարտի 30-ի թիվ 420-Ն որոշման:

12. ԲԿ-ի սպասարկման ենթակա ազգաբնակչության հաշվառումը կատարվում է տարին երկու անգամ՝ ԲԿ-ի տնօրենի հրամանի հիման վրա: Հաշվառվում են՝

- 1) բնակության տվյալ հասցեում մշտական բնակվող և գրանցված անձինք,
- 2) բնակության տվյալ հասցեում գրանցված, սակայն այլ հասցեում բնակվող անձինք (կատարվում է նշում հասցեի մասին),
- 3) տվյալ հասցեում բնակվող, սակայն չգրանցված կամ այլ հասցեում գրանցված անձինք (կատարվում է նշում գրանցման հասցեի կամ դրա բացակայության մասին),
- 4) ԲԿ-ում նոր հաշվառված յուրաքանչյուր անձ,
- 5) ԲԿ-ում հաշվառված անձինք՝ բժշկի ազատ ընտրության դեպքում:

13. Նորածինների հաշվառման դեպքում յուրաքանչյուր նորածնի համար լրացվում է «Կանխարգելիչ պատվաստումների քարտ»՝ համաձայն սույն հավելվածի Ձև 13-ի: Հաշվառված ազգաբնակչության տվյալները գրանցվում են «0-18 տարեկան երեխաների հաշվառման «Մայր մատյան»»-ում և «Մեծահասակների հաշվառման մատյան»-ում՝ համաձայն սույն հավելվածի Ձև 1-ի, Ձև 2-ի, և/կամ էլեկտրոնային գործող համակարգում («Էլեկտրոնային առողջապահություն»):

14. Հաշվառումից հետո կատարվում է բժշկական փաստաթղթերի համեմատություն՝ Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի 2007 թվականի նոյեմբերի 26-ի N 1752-Ն հրամանով հաստատված «Երեխայի բժշկական հսկողության ամբուլատոր քարտի», ինչպես նաև «Կանխարգելիչ պատվաստման քարտի»՝ համաձայն սույն հավելվածի Ձև 13-ի, անհամապատասխանության դեպքում կազմվում են նոր փաստաթղթեր:

15. Բնակության վայրից ժամանակավոր բացակայության դեպքում երեխան հաշվառման մեջ մնում է 30 օր ժամկետով, վերադարձի դեպքում վերահաշվառվում է:

16. Հաշվառումից դուրս եկած անձանց «Կանխարգելիչ պատվաստումների քարտերը»՝ համաձայն սույն հավելվածի Ձև 13-ի, պահվում են առանձին, իսկ վերադարձի դեպքում նրանք կրկին հաշվառվում են՝ նշելով «Կանխարգելիչ պատվաստումների քարտում» նոր հաշվառման ամսաթիվը:

ԳԼՈՒԽ 4
ՊԱՏՎԱՍՏՈՒՄԱՅԻՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ ԲԺՇԿԱԿԱՆ
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

17. Իմունականխարգելման կաբինետի աշխատանքը կազմակերպվում է պահպանելով իմունականխարգելման գործընթացը կարգավորող նորմատիվ իրավական ակտերի և մեթոդական ուղեցույցների պահանջները՝ բժշկական օգնության և սպասարկման տվյալ տեսակն իրականացնելու լիցենզիայի առկայության դեպքում:

18. Պատվաստումներն իրականացվում են իմունականխարգելման կաբինետում: ԲԿ-ի տնօրենը հաստատում է իմունականխարգելման կաբինետի պատասխանատուների, ինչպես նաև արտագնա/շարժական պատվաստումային խմբերի աշխատանքային պարտականությունները, նշանակում է իմունականխարգելման գործընթացի պատասխանատու՝ պատվաստումային գործընթացի կազմակերպման և իրականացման, ԿՎՀ-ների վարման (վարակաբանի բացակայության դեպքում), ԲԻԿՊ-ների ստացման, հաշվառման, պահպանման, սառցային շղթայի պահպանման, պատվաստումների ընթացքում առաջացած բժշկական թափոնների հավաքման, պահպանման և ոչնչացման համար:

19. Կանխարգելիչ պատվաստումների իրականացման համար պատասխանատու են՝ ԲԿ-ի տնօրենը, իմունականխարգելման և կառավարելի վարակիչ հիվանդությունների գործընթացը վարող բժիշկները (իմունականխարգելման կաբինետի բժիշկ, մանկաբույժ, ընտանեկան բժիշկ, բժիշկ վարակաբան), բուժակ-մանկաբարձական կետերում (այսուհետ՝ ԲՄԿ)՝ բուժքույրերը:

20. Կանխարգելիչ պատվաստումների ամսական, եռամսյակային, տարեկան հաշվետվությունների ներկայացումը և հավաստիությունը նպատակային քանակակազմերի շրջանում ապահովում է ԲԿ-ի տնօրենը:

21. Գյուղական ԲՄԿ-ում, որտեղ բացակայում են սառնարանային սարքավորումները, պատվաստումներն իրականացվում են այն ԲԿ-ի արտագնա/շարժական պատվաստումային խմբերի միջոցով, որի կազմում է տվյալ ԲՄԿ-ն:

22. Դժվարամատչելի վայրերում, որտեղ բացակայում են ԲԿ-ները, մարզային մակարդակում ստեղծվում են արտագնա/շարժական պատվաստումային խմբեր, ձևավորվում են ժամանակավոր պատվաստումային կետեր պլանային, զանգվածային, ինչպես նաև համաճարակաբանական ցուցումով պատվաստումների իրականացման համար:

23. Մանկական հատուկ կրթական կազմակերպությունների (մանկատուն, հատուկ դպրոցներ, կենտրոններ և այլն) երեխաները կամ բնակչության սոցիալական պաշտպանության խնամքի կենտրոնների բնակիչները պատվաստվում են տեղում կամ կցագրված ԲԿ-ում:

24. Կանխարգելիչ պատվաստումներն իրականացվում են խստորեն պահպանելով պատվաստանյութին ուղեկցող հրահանգների պահանջները, եթե Լիազոր մարմնի ղեկավարի հրամանով չկան հաստատված այլ հրահանգներ:

25. Իմունականխարգելման կաբինետում ապահովվում է ամենօրյա մաքրում, օդափոխություն: Պատվաստման սենքի տարածքը օրը 2 անգամ ենթարկվում է խոնավ մաքրման՝ օգտագործելով լվացող միջոց և այդ նպատակի համար առանձնացված և մակնշված մաքրող պարագաներ, իսկ օրվա վերջում

օգտագործվում է ախտահանիչ նյութ: Շաբաթվա մեջ մեկ անգամ իրականացվում է պատվաստման կաբինետի հիմնական մաքրում:

26. Իմունականիսարգելման գործընթացին առնչվող բոլոր փաստաթղթերը պահպանվում են Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի ապրիլի 4-ի N 397-Ն որոշմամբ սահմանված ժամկետներում:

27. Իմունականիսարգելման գործընթացի մշտադիտարկումն իրականացվում է ըստ գործող վարչական վիճակագրական հաշվետվությունների ձևաչափերի՝ առողջապահության նախարարության «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության (այսուհետ՝ «ՀՎԿ ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ» ՊՈԱԿ) տեղեկատվական հոսքերով, և «ՀՎԿ ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ» ՊՈԱԿ-ի կողմից պատվաստումային գործընթացի եռամսյակային աջակցողական մշտադիտարկումներով:

ԳԼՈՒԽ 5

ԻՄՈՒՆԱԿԱՆԻՍԱՐԳԵԼՄԱՆ ԿԱԲԻՆԵՏԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐ ԵՎ ՀԱԳԵՑՎԱԾՈՒԹՅՈՒՆ

28. Կանխարգելիչ պատվաստումների անցկացման համար սենքային կազմը, մակերեսները, տեղակայումը, լուսավորությունը (բնական և արհեստական) համապատասխանեցվում է Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարության 2001 թվականի հոկտեմբերի 1-ի թիվ 82-Ն հրամանով հաստատված «Հասարակական շենքեր և կառուցվածքներ» ՍՆԻՊ 2.08.02-89 շինարարական նորմերի և կանոնների պահանջներին:

29. Նոր կառուցվող և վերակառուցվող իմունականիսարգելման կաբինետի սենքային կազմին և մակերեսներին ներկայացվող պահանջները ներկայացված են Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարության 2001 թվականի հոկտեմբերի 1-ի թիվ 82-Ն հրամանով հաստատված «Հասարակական շենքեր և կառուցվածքներ» ՍՆԻՊ 2.08.02-89 շինարարական նորմերում և կանոններում:

30. Իմունականիսարգելման կաբինետն ապահովվում է բնական օդափոխությամբ՝ առանց կենտրոնացված օդի ներհոսի տրման (օդափոխությունն իրականացվում է օդանցքների միջոցով և օդափոխիչ մղանցքներով):

31. Իմունականիսարգելման կաբինետն ապահովվում է կենտրոնական ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերով, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի 2002 թվականի դեկտեմբերի 25-ի թիվ 876 հրամանով հաստատված «Խմելու ջուր: Զրամատակարարման կենտրոնացված համակարգերի ջրի որակին ներկայացվող հիգիենիկ պահանջներ: Որակի հսկողություն» N2-III-Ա2-1 սանիտարական նորմերի և կանոնների պահանջներին համապատասխանող ջրով:

32. Իմունականիսարգելման կաբինետի հագեցվածությունն է՝

- 1) սեղան (բժշկի և բուժքրոջ համար), աթոռ, թախտ, բարուրման սեղան, 1 հատ ճնշում չափելու սարք, 2 հատ ջերմաչափ, ջերմաչափերի պահպանման տարաներ՝ «մաքուր» և «կեղտոտ» մակնշումներով,

- 2) պատվաստանյութերի պահպանման սառնարան՝ համարակալված, մակնշված դարակներով, 2 ջերմաչափով, ջերմաստիճանի էլեկտրոնային հսկողության սարքով, թերմոկոնտեյներ և սառնարան-պայուսակներ, սառցային տարրեր, որոնց քանակը համապատասխանում է թերմոկոնտեյների և սառնարան-պայուսակների օգտագործման հրահանգում նշված քանակին,
- 3) բժշկական պահարան, առաջին օգնության միջոցների հավաքածու՝ համաձայն Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի 2018 թվականի մարտի 5-ի N566-Ա հրամանի, անհետաձգելի օգնության դեղորայքի ցանկը և անհետաձգելի օգնության միջոցառումների հրահանգը՝ փակցված տեսանելի և անհրաժեշտության դեպքում օգտագործման համար հարմար տեղում,
- 4) պիտակավորված՝ ախտահանման ենթակա բժշկական սեղաններ, բուժքրոջ աշխատանքային սեղան, փաստաթղթերի համար պահարան,
- 5) ձեռքերի լվացման համար լվացարան, ախտահանիչ նյութ, միանվագ օգտագործման անձեռոցիկներ, սրբիչներ,
- 6) քարտադարան՝ կանխարգելիչ պատվաստումների քարտերի համար դարակաշարերով, և/կամ էլեկտրոնային քարտադարան,
- 7) արտակարգ իրավիճակների դեպքում պատվաստանյութերի և օժանդակ պարագաների շտապ տեղափոխման գրավոր պլան:

ԳԼՈՒԽ 6

ԾՆՆԴՕԳՆՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ԻՄՈՒՆԱԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ԳՈՐԾՆԹԱՑԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ ԵՎ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄ

33. Ծննդօգնություն իրականացնող ԲԿ-ներում պատվաստումներն իրականացվում են իմունականխարգելման կաբինետում կամ հիվանդասենյակում՝ պարտադիր ծնողի կամ խնամակալի ներկայությամբ, նախապես ծնողին կամ խնամակալին իրազեկվում է ԲՅԺ և վիրուսային հեպատիտ Բ պատվաստումների միջոցով կանխարգելիչ հիվանդությունների, հիվանդության բարդությունների, ինչպես նաև պատվաստումից հետո դիտվող երևույթների մասին:

34. Հիվանդասենյակում պատվաստումային գործընթացն իրականացվում է նախօրոք ձևավորված շարժական սեղանի միջոցով, որը հագեցված է պատվաստման համար անհրաժեշտ բոլոր պարագաներով՝

- 1) սառնարան-պայուսակ՝ բեռնավորված պատվաստանյութերով,
- 2) ներարկիչներ՝ միանվագ օգտագործման (պատվաստանյութի վերականգնման համար) և միանվագ օգտագործման ինքնարգելափակվող (պատվաստումների իրականացման համար), բամբակ, ներարկման տեղի մշակման համար թորած ջուր և/կամ 70° սպիրտ: ԲՅԺ պատվաստման դեպքում ներարկման տեղի մշակման համար ախտահանիչ միջոց չի օգտագործվում (օգտագործվում է միայն թորած ջուր),

3) առաջին օգնության դեղորայք, դեղորայքի կիրառման հրահանգ,

4) անվտանգ այրման տուփ:

35. Նորածինը պատվաստումից առաջ զննվում է բժշկի կողմից, կատարվում է ջերմաչափում, գնահատվում է ընդհանուր առողջական վիճակը:

36. Կատարված պատվաստումները գրանցվում են «Նորածինների պատվաստումների գրանցամատյան»-ում՝ համաձայն սույն հավելվածի Ձև 5-ի, ըստ հերթական համարների (յուրաքանչյուր ամսվա համար նոր հերթական համար չի սկսվում, այլ շարունակվում է) և/կամ էլեկտրոնային գործող համակարգով («էլեկտրոնային առողջապահություն»), պարտադիր նշվում է պատվաստվողի ծննդյան ամսաթիվը, տարեթիվը և ժամը՝ պատվաստման պահին: Նորածնի տարիքը նշվում է համապատասխան սյունակում՝ օրերով և ժամերով:

37. Պատվաստումը գրանցվում է անմիջապես կատարելուց հետո՝ ճշգրիտ պահպանելով պատվաստումների հերթականությունը (օրինակ՝ բազմադեղաչափ պատվաստանյութերի համար գրանցամատյանում հստակ պահպանվում է հաջորդական դեղաչափ ստացողների հերթականությունը): Վերջինս անհրաժեշտ է հետպատվաստումային շրջանում առաջացած կողմնակի երևույթների գնահատման համար:

ԳԼՈՒԽ 7

ԿԱՆԽԱՐԳԵԼԻՉ ՊԱՏՎԱՍՏՈՒՄՆԵՐԻ ՊԼԱՆԱՎՈՐՈՒՄ

38. Պատվաստումների պլանավորման և արդյունավետ իրականացման համար որոշվում է պատվաստումային գործընթացի տեսակը՝ ֆիքսված (մշտական), արտագնա (առնվազն ամիսը մեկ անգամ), շարժական՝ անհրաժեշտության դեպքում:

39. Կանխարգելիչ պատվաստումների տարեկան/ամսական պլանը կազմվում է տեղամասային մանկաբույժի, ընտանեկան բժշկի և իմունականխարգելման կաբինետի բժշկի /բացակայության դեպքում՝ բուժքրոջ/, գյուղական վայրերում՝ բժշկի կամ բուժքրոջ կողմից, ելնելով՝

1) երեխաների տարիքային քանակակազմից,

2) կանխատեսվող նորածինների թվից,

3) նախորդ տարում/ամսում պատվաստումներից դուրս մնացած երեխաների թվից:

40. Յուրաքանչյուր տարվա սկզբում՝ մինչև հունվարի 15-ը, ԲԿ-ն Լիազոր մարմնին է ներկայացնում հաշվառված բնակչության տարիքային կազմը:

41. Յուրաքանչյուր ամսվա առաջին աշխատանքային օրը ԲԿ-ում ըստ տեղամասերի կազմվում է պատվաստումների ամսական պլան՝ ըստ պատվաստումների հերթական դեղաչափերի՝ համաձայն սույն հավելվածի Ձև 3-ի:

42. «Պատվաստման ենթակա երեխաների պլանավորման» և «Պատվաստման ենթակա մեծահասակ անձանց պլանավորման» մատյանները վարվում են տեղամասային բուժքրոջ կողմից, տեղամասային բժշկի հսկողությամբ՝ համաձայն սույն հավելվածի Ձև 3-ի, Ձև 4-ի:

43. Նախորդ ամսվա պլանից դուրս մնացած երեխաների տվյալները տեղափոխվում են հաջորդ ամսվա պլանի մեջ և պլանավորվում են ամսվա առաջին

օրերին: Մեծահասակ անձանց պատվաստումները պլանավորվում են տարեկան կտրվածքով:

ԳԼՈՒԽ 8

ԿԱՆԽԱՐԳԵԼԻՉ ՊԱՏՎԱՍՏՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐ

44. Պատվաստումների ազգային օրացույցում ներառված պատվաստումներն օրացուցային ժամկետներից շուտ չեն իրականացվում, բացառությամբ համաճարակաբանական ցուցման և/կամ ճանապարհորդությունից առաջ: Օրացուցային ժամկետներից շեղումների դեպքում միանման պատվաստանյութի հերթական չափաբաժինների միջև պահպանվում է նվազագույնը 4 շաբաթ ժամանակահատված:

45. Պատվաստումների միջև թույլատրելի և անհրաժեշտ ժամանակահատվածը սահմանվում է՝

1) արտաընդերային (պարենտերալ) ներմուծվող կենդանի պատվաստանյութերը՝ տուբերկուլոզի (այսուհետ՝ ԲՅԺ), կարմրուկի, կարմրախտի համակցված (այսուհետ՝ ԿԿ), կարմրուկի, կարմրախտի, խոզուկի համակցված (այսուհետ՝ ԿԿԽ), տուլարեմիայի դեմ, կարող են ներմուծվել միաժամանակ կամ նվազագույնը 4 շաբաթ ընդմիջումով,

2) ինակտիվացված պատվաստանյութերը՝ համակցված կապույտ հազի, դիֆթերիայի, փայտացման, վիրուսային հեպատիտ Բ-ի, հեմոֆիլուս ինֆլուենզա Բ-ի, ինակտիվացված պոլիոմիելիտի (այսուհետ՝ ԱԿԴՓ/ՎՀԲ/ՀԻԲ/ԻՊՊ), կապույտ հազի, դիֆթերիայի, փայտացման համակցված (այսուհետ՝ ԱԿԴՓ համակցված), դիֆթերիայի, փայտացման նվազեցված դեղաչափով (այսուհետ՝ ԱԴՓ-Մ), այնձևակոկային (այսուհետ՝ Պնձն), վիրուսային հեպատիտ Բ-ի (այսուհետ՝ ՎՀԲ), պոլիոմիելիտի ինակտիվացված՝ ներարկման (այսուհետ՝ ԻՊՊ), մենինգակոկային, վիրուսային հեպատիտ Ա-ի (այսուհետ՝ ՎՀԱ), մարդու պապիլոմավիրուսային վարակի դեմ պատվաստում (այսուհետ՝ ՄՊՊ), ինչպես նաև այլ հակածիններով ինակտիվացված պատվաստանյութեր, և կենդանի՝ արտաընդերային (ԲՅԺ, կարմրուկի, ԿԿ, ԿԿԽ, տուլարեմիայի) կամ բերանային պոլիոմիելիտային (այսուհետ՝ ՕՊՊ), ռոտավիրուսային (այսուհետ՝ Ռոտա) պատվաստանյութերի միջև՝ ցանկացած ընդմիջումով կամ միաժամանակ,

3) կենդանի բերանային տարբեր պատվաստանյութերը ներմուծվում են միաժամանակ կամ ցանկացած ընդմիջումով՝ ինակտիվացված և կենդանի արտաընդերային պատվաստանյութերի հետ:

46. Փաստագրված պատվաստումների առկայության դեպքում պատվաստումների հաջորդական դեղաչափերը շարունակվում են (նախկին դեղաչափերը չեն կրկնվում), ոչ մի դեղաչափ կորած չի համարվում:

47. Այլ երկրներում պատվաստումներ ստացած անձանց պատվաստումները շարունակվում են՝ հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Պատվաստումների ազգային օրացույցը:

48. Առողջական վիճակի հետ կապված պատվաստումների միջև ընդմիջումների երկարացման դեպքում պատվաստումը կատարվում է երեխայի առողջացումից անմիջապես հետո:

49. Համաճարակաբանական ցուցումով բնակչության շրջանում կամ կոնկրետ ռիսկի խմբերում կազմակերպվում և իրականացվում են տվյալ վարակիչ հիվանդության դեմ կանխարգելիչ պատվաստումներ՝ պահպանելով յուրաքանչյուր պատվաստանյութին ուղեկցող փաստաթղթի և/կամ հրահանգի, եթե Լիազոր մարմնի ղեկավարի հրամանով այլ պահանջներ սահմանված չեն:

50. Նախազորակոչային և զորակոչային տարիքի անձանց պատվաստումները գրանցվում են բոլոր բժշկական փաստաթղթերում, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության Կառավարության 2018 թվականի ապրիլի 12-ի N405-Ն որոշմամբ հաստատված «Առողջության անձնագրում»:

51. ԲԿ-ներում նորածինների հաշվառման ժամանակ ծնողներին տրվում է «Կանխարգելիչ պատվաստումների վկայական»՝ համաձայն սույն հավելվածի Ձև 14-ի, յուրաքանչյուր պատվաստումից հետո նշելով հաջորդ պատվաստման ներկայանալու ամսաթիվը:

52. Կանխարգելիչ պատվաստումներ չեն իրականացվում վիրակապարանում կամ միջամտությունների սենյակում, բացառությամբ արտակարգ կանխարգելման դեպքերի (փայտացման և կատաղության դեմ):

53. Պատվաստումից առաջ գնահատվում է պատվաստվող անձի ընդհանուր առողջական վիճակը՝ բժիշկը հավաքում է մանրակրկիտ վերիուշ, կատարում է սուբյեկտիվ և օբյեկտիվ գնում, ջերմաչափում: Չննման և ջերմաչափման տվյալները բժշկի կողմից գրանցվում են ամբուլատոր քարտում:

54. Բժշկական ձեռնոցների կիրառումը պատվաստումների իրականացման ընթացքում ցուցված չէ:

55. Կանխարգելիչ պատվաստումներից առաջ պատվաստում իրականացնող բուժաշխատողը տեսողական ստուգում է շշկի կամ սրվակի ամբողջականությունը, պիտակը, ներարկվող պատրաստուկի արտաքին տեսքը, գույնը, պիտանելիության ժամկետը, պատվաստանյութի շշկի ցուցիչի (այսուհետ՝ ՊՇՑ) առկայության դեպքում՝ ցուցիչի վիճակը:

56. Լիոֆիլացված պատվաստանյութի վերականգնումն իրականացվում է պատվաստանյութի հրահանգին համապատասխան՝ խստորեն պահպանելով պատվաստումների անվտանգ իրականացման կանոնները և սառցային շղթայի պահանջները:

57. Իմունակենսաբանական պատրաստուկների ներարկման ճանապարհով ներմուծումը կատարվում է միանվագ օգտագործման ինքնարգելափակվող/ինքնառջնչացվող ներարկիչով, անվտանգության կանոնների պահպանմամբ: Միաժամանակյա մի քանի ներարկումների դեպքում յուրաքանչյուր պատվաստանյութ ներարկվում է առանձին ներարկիչով, մարմնի տարբեր հատվածներում՝ համաձայն պատվաստանյութերի կիրառման հրահանգի, պահպանելով ներարկման տեղերի միջև առնվազն 2,5 սմ հեռավորություն:

58. Պատվաստանյութի ներարկման տեղը մշակվում է 70° սպիրտով կամ թորած ջրով (սպիրտի դեպքում սպասել մինչև չորանալը): ԲՅԺ պատվաստման դեպքում

ներարկման տեղի մշակման համար ախտահանիչ միջոց չի օգտագործվում (օգտագործվում է միայն թորած ջուր):

59. Յուրաքանչյուր պատվաստանյութ ներարկվում է տվյալ պատվաստանյութի կիրառման հրահանգին համապատասխան՝ նշված դեղաչափով և ներարկման մեթոդաբանությամբ (ներմաշկային, միջմկանային, ենթամաշկային, վերմաշկային), պատվաստվողի պառկած կամ նստած վիճակում՝ ուշագնացության դեպքում վայր ընկնելուց խուսափելու համար:

60. Բոլոր պատվաստումները կարելի է կատարել տուբերկուլինային մաշկային թեսթի կամ տուբերկուլոզի այլ արագ ախտորոշման թեսթի հետ նույն օրը, բացառությամբ ԲՅԺ պատվաստման, կամ փորձը դնելուց 48-72 ժամ հետո՝ փորձի արդյունքի դիտարկման օրը, եթե արդյունքը բացասական է: Եթե նախապես կատարվել է կենդանի՝ պարենտերալ (ներարկման) պատվաստում, կամ անձը ստացել է արյան պատրաստուկներ, ապա այդ դեպքում փորձը կատարվում է 4 շաբաթ հետո, իսկ ոչ կենդանի ներարկումային կամ կենդանի բերանային պատվաստումների դեպքում ժամկետի պահպանման անհրաժեշտություն չկա: Տուբերկուլոզի արագ ախտորոշման այլ թեսթերի կիրառման դեպքում պետք է առաջնորդվել արտադրողի կողմից տրված հրահանգի պահանջներով:

61. Արտագնա պատվաստումների ընթացքում մեկ պատվաստման կետից մյուսը պատվաստանյութի բացված և/կամ վերականգնված սրվակները չեն տեղափոխվում (խոտանվում են):

62. Պատվաստումից հետո պատվաստվողը մնում է ԲԿ-ում՝ առնվազն 30 րոպե: Բժիշկը տրամադրում է տեղեկատվություն և խորհրդատվություն հետպատվաստումային շրջանում հնարավոր ռեակցիաների մասին:

ԳԼՈՒԽ 9

ԿԱՆԽԱՐԳԵԼԻՉ ՊԱՏՎԱՍՏՈՒՄՆԵՐԻ ԳՐԱՆՑՈՒՄ ԵՎ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

63. Պատվաստումների գրանցման ճշգրտությունը և հավաստիությունն ապահովում է պատվաստում իրականացնող բուժաշխատողը:

64. Պատվաստումից առաջ պատվաստվողի զննման տվյալները գրանցվում են Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի 2007 թվականի նոյեմբերի 26-ի N 1752-Ն հրամանով հաստատված «Նորածնի զարգացման քարտում», «Երեխայի բժշկական հսկողության ամբուլատոր քարտում» և «Մեծահասակի ամբուլատոր բժշկական քարտում» և/կամ էլեկտրոնային գործող համակարգում («Էլեկտրոնային առողջապահություն»):

65. Կատարված կանխարգելիչ պատվաստումները գրանցվում են «Նորածինների պատվաստումների գրանցամատյանում»՝ համաձայն սույն հավելվածի Ձև 5-ի, «Պատվաստումների գրանցամատյանում»՝ համաձայն սույն հավելվածի Ձև 6-ի, «Կանխարգելիչ պատվաստումների քարտում»՝ համաձայն սույն հավելվածի Ձև 13-ի, «Կանխարգելիչ պատվաստումների վկայականում»՝ համաձայն սույն հավելվածի Ձև 14-ի, «Պատվաստման ենթակա երեխաների պլանավորման մատյանում»՝ համաձայն սույն հավելվածի Ձև 3-ի, «Պատվաստման ենթակա մեծահասակ անձանց

պլանավորման մատյանում»՝ համաձայն սույն հավելվածի Ձև 4-ի, «Մեծահասակ անձանց պատվաստումների գրանցամատյանում»՝ համաձայն սույն հավելվածի Ձև 7-ի, և Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի 2007 թվականի նոյեմբերի 26-ի N 1752-Ն հրամանով հաստատված պատվաստվողի համապատասխան բժշկական փաստաթղթերում՝ «Նորածնի զարգացման քարտում», «Երեխայի բժշկական հսկողության ամբուլատոր քարտում», «Մեծահասակի ամբուլատոր բժշկական քարտում», և/կամ էլեկտրոնային գործող համակարգում («Էլեկտրոնային առողջապահություն»):

66. Կատարված կանխարգելիչ պատվաստումների, հետպատվաստումային անբարեհաջող դեպքերի, պատվաստումների հակացուցումների, պատվաստումներում ընդգրկվածության և ընդգրկվածության կորստի մակարդակների վերաբերյալ հաշվետվությունները կազմվում և ներկայացվում են վարչական վիճակագրական հաշվետվություններով և/կամ էլեկտրոնային գործող համակարգով («Էլեկտրոնային առողջապահություն»):

67. Պատվաստումների գրանցամատյանում գրանցվում են նաև պատահական ծակոցները, իսկ բացակայության դեպքում՝ նշվում է «0», որը վկայում է պատվաստման ընթացքում բուժաշխատողի մոտ պատահական ծակոցի բացակայության մասին, ինչպես նաև բարձրացնում է բուժաշխատողի զգոնությունը:

ԳԼՈՒԽ 10

ՊԱՏՎԱՍՏՈՒՄԱՅԻՆ ԳՈՐԾԸՆԹԱՅԻ ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄ

68. Պատվաստումային գործընթացի մշտադիտարկումը պատվաստումների իրականացման, ինչպես նաև ժամանակին, ամբողջական և առանձին պատվաստումներում ընդգրկվածության և հիվանդացության շարունակական դիտարկումն է:

69. Մշտադիտարկումը ներառում է՝

1) պատվաստումների գրանցման հիմնական փաստաթղթերի վարման դիտարկում՝ Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի 2007 թվականի նոյեմբերի 26-ի N 1752-Ն հրամանով հաստատված «Նորածնի զարգացման քարտ», «Երեխայի բժշկական հսկողության ամբուլատոր քարտ», «Մեծահասակի ամբուլատոր բժշկական քարտ», ինչպես նաև «0-18 տարեկան երեխաների հաշվառման «Մայր մատյան»»՝ համաձայն սույն հավելվածի Ձև 1-ի, «Մեծահասակների հաշվառման մատյան»՝ համաձայն սույն հավելվածի Ձև 2-ի, «Բժշկական իմունակենսաբանական պատրաստուկների պլանավորման հայտ»՝ համաձայն սույն հավելվածի Ձև 18-ի, «Բժշկական իմունակենսաբանական պատրաստուկների գրանցամատյան»՝ համաձայն սույն հավելվածի Ձև 19-ի, «Կանխարգելիչ պատվաստումների քարտ»՝ համաձայն սույն հավելվածի Ձև 13-ի, «Կանխարգելիչ պատվաստումների վկայական»՝ համաձայն սույն հավելվածի Ձև 14-ի, «Պատվաստման ենթակա երեխաների պլանավորման մատյան»՝ համաձայն սույն հավելվածի Ձև 3-ի, «Պատվաստման ենթակա մեծահասակ անձանց պլանավորման մատյան»՝ համաձայն սույն հավելվածի Ձև 4-ի, «Նորածինների պատվաստումների գրանցամատյան»՝ համաձայն սույն հավելվածի Ձև 5-ի, «Պատվաստումների գրանցամատյան»՝ համաձայն սույն

հավելվածի Ձև 6-ի, միայն մեծահասակ ազգաբնակչությանը սպասարկող ԲԿ-ներում՝ «Մեծահասակների պատվաստումների գրանցամատյան»՝ համաձայն սույն հավելվածի Ձև 7-ի, «Հետպատվաստումային անբարեհաջող դեպքերի գրանցամատյան»՝ համաձայն սույն հավելվածի Ձև 32-ի, «Կանխարգելիչ պատվաստումների բժշկական հակացուցումների և պատվաստումներից հրաժարվողների գրանցամատյան»՝ համաձայն սույն հավելվածի Ձև 17-ի, «Պատվաստումներում ընդգրկվածության կորստի մոնիթորինգի թերթիկ»՝ համաձայն սույն հավելվածի Ձև 8-ի, «Պատվաստումներում տարեկան ընդգրկվածության մոնիթորինգի գծապատկեր»՝ համաձայն սույն հավելվածի Ձև 9-ի, «Պատվաստումների հաշվառման թերթիկ»՝ համաձայն սույն հավելվածի Ձև 10-ի, «Պատվաստանյութերի և օժանդակ պարագաների օրական ծախսի թերթիկ»՝ համաձայն սույն հավելվածի Ձև 20-ի, «Բժշկական իմունակենսաբանական պատրաստուկների և օժանդակ պարագաների խոտանման գրանցամատյան»՝ համաձայն սույն հավելվածի Ձև 21-ի, «Բժշկական իմունակենսաբանական պատրաստուկների և օժանդակ պարագաների խոտանման արձանագրություն»՝ համաձայն սույն հավելվածի Ձև 22-ի, «Սառնարանային սարքավորումների գույքագրման և շահագործման գրանցամատյան»՝ համաձայն սույն հավելվածի Ձև 23-ի, «Սառցային շղթայի սարքավորումների գույքագրման և շահագործման վերաբերյալ տարեկան հաշվետվություն»՝ համաձայն սույն հավելվածի Ձև 24-ի, «Բժշկական իմունակենսաբանական պատրաստուկների պահպանման ջերմային ռեժիմի հսկողության գրանցամատյան»՝ համաձայն սույն հավելվածի Ձև 25-ի, «Ջերմաստիճանի մոնիթորինգի գրանցման ձևաթուղթ էլեկտրոնային սարքի համար»՝ համաձայն սույն հավելվածի Ձև 26-ի, «Անվտանգ այրման տուփերի ոչնչացման գրանցամատյան»՝ համաձայն սույն հավելվածի Ձև 27-ի, և այլ փաստաթղթերով և/կամ էլեկտրոնային գործող համակարգով («էլեկտրոնային առողջապահություն»),

2) պատվաստումների իրականացման գործընթացի մշտադիտարկում՝ պատվաստումների իրականացման գործընթացի վերաբերյալ տվյալների հավաքման, ամփոփման, պատվաստումների ամսական հաշվետվությունների և ԿՎՀ-ի հաշվետվությունների, պատվաստումներում ընդգրկվածության, ընդգրկվածության կորստի մակարդակի, ինչպես նաև ԿՎՀ-ով հիվանդացության մակարդակների գնահատման համար մշտադիտարկման գծապատկեր կազմելու միջոցով,

3) պատվաստումային գործընթացի աջակցողական մշտադիտարկում, որն իրականացվում է եռամսյակը մեկ անգամ:

ԳԼՈՒԽ 11

ԲԺՇԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ԻՄՈՒՆԱԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՅՈՒՄ ԸՆԴԳՐԿՎԱԾ ՄԱՍՆԱԳԵՏՆԵՐԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

70. Իմունականխարգելման գործընթացում ընդգրկված մասնագետներն ապահովում են՝

1) յուրաքանչյուր նորածնի և նոր ընդգրկված երեխայի համար «Կանխարգելիչ պատվաստումների քարտ»՝ համաձայն սույն հավելվածի Ձև 13-ի, «Կանխարգելիչ

պատվաստումների վկայական»՝ համաձայն սույն հավելվածի Ձև 14-ի, և Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի 2007 թվականի նոյեմբերի 26-ի N 1752-Ն հրամանով հաստատված «Երեխայի բժշկական հսկողության ամբուլատոր քարտի» առկայություն և գրանցում,

- 2) կանխարգելիչ պատվաստումների քարտերի քարտադարանի ստեղծում և վարում՝ ըստ տեղամասերի և ամիսների,
- 3) իմունականխարգելման գործընթացում կիրառվող գրանցամատյանների, հաշվառման և հաշվետվությունների ձևաթղթերի վարում,
- 4) կանխարգելիչ պատվաստումների տարեկան և ամսական պլանավորում՝ իմունականխարգելման կաբինետի բժշկի (տեղամասային, ընտանեկան բժիշկ), իսկ բժշկի բացակայության դեպքում՝ բուժքրոջ կողմից,
- 5) պատվաստում իրականացնելու համար անհրաժեշտ միջոցների (պատվաստանյութ, ներարկիչ, այրման տուփ և այլն) պահանջարկի որոշում և հայտի ներկայացում՝ իմունականխարգելման կաբինետի բժշկի (տեղամասային, ընտանեկան բժիշկ), իսկ բժշկի բացակայության դեպքում՝ բուժքրոջ կողմից,
- 6) կանխարգելիչ պատվաստումների իրականացում, պատվաստումներում ընդգրկվածության (ամբողջական, ժամանակին, ըստ առանձին պատվաստումների), կորստի մակարդակի գնահատում՝ իմունականխարգելման կաբինետի բժշկի (տեղամասային, ընտանեկան բժիշկ), իսկ բժշկի բացակայության դեպքում՝ բուժքրոջ կողմից,
- 7) կատարված պատվաստումների գրանցում՝ «Կանխարգելիչ պատվաստումների քարտ»՝ համաձայն սույն հավելվածի Ձև 13-ի, «Կանխարգելիչ պատվաստումների վկայական»՝ համաձայն սույն հավելվածի Ձև 14-ի, «Պատվաստման ենթակա երեխաների պլանավորման մատյան»՝ համաձայն սույն հավելվածի Ձև 3-ի, «Պատվաստման ենթակա մեծահասակ անձանց պլանավորման մատյան»՝ համաձայն սույն հավելվածի Ձև 4-ի, «Նորածինների պատվաստումների գրանցամատյան»՝ համաձայն սույն հավելվածի Ձև 5-ի, «Պատվաստումների գրանցամատյան»՝ համաձայն սույն հավելվածի Ձև 6-ի, «Մեծահասակների պատվաստումների գրանցամատյան»՝ համաձայն սույն հավելվածի Ձև 7-ի, «Պատվաստումների հաշվառման թերթիկ»՝ համաձայն սույն հավելվածի Ձև 10-ի, «Մեծահասակների պատվաստումների հաշվառման թերթիկ»՝ համաձայն սույն հավելվածի Ձև 11-ի, «Պատվաստանյութերի և օժանդակ պարագաների օրական ծախսի թերթիկ»՝ համաձայն սույն հավելվածի Ձև 20-ի,
- 8) յուրաքանչյուր ամիս պատվաստումներում ընդգրկվածության (ամբողջական, ժամանակին, ըստ առանձին պատվաստումների), կորստի մակարդակի, պատվաստումների կատարողականի վերլուծություն՝ ըստ տեղամասերի իմունականխարգելման կաբինետի պատասխանատուի կողմից և ներկայացում ԲԿ-ի տնօրենին,

- 9) հակացուցումների հիմնավորում և գրանցամատյանի վարում, հետպատվաստումային անբարեհաջող դեպքերի ժամանակին հայտնաբերում, գրանցում, գնահատում, հաղորդում, բուժում, հսկողություն, հաշվառում և հետազոտություն,
- 10) պատվաստում ստացած անձանց բոլոր փաստաթղթերի պահպանում ԲԿ-ում՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի ապրիլի 4-ի «Պահպանության ժամկետների նշումով արխիվային փաստաթղթերի օրինակելի ցանկը սահմանելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մարտի 9-ի N 351-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 397-Ն որոշմամբ սահմանված ժամկետով,
- 11) ԿՎՀ-ների, այդ թվում հետպատվաստումային անբարեհաջող դեպքերի համաճարակաբանական դիտարկման գործառույթների իրականացում (վաղ հայտնաբերում, հաշվառում, հաղորդում և դեպքերի վարում),
- 12) երեխաների պատվաստումների պլանավորման մատյանում երեխայի տարիքի գրանցում՝ մինչև 12 ամսական երեխաների տարիքը նշելով շաբաթականով և օրականով (օրինակ՝ 12 շաբաթական 5 օրական), 1-ից մինչև 2 տարեկանը՝ ամիսներով, օրերով (օրինակ՝ 15 ամսական 5 օրական), իսկ 2 տարեկանից բարձր՝ տարիներով և ամիսներով (6 տարեկան 10 ամսական),
- 13) պատվաստումային սեսիաների պլանի կազմում այն ԲԿ-ում, որտեղ իրականացվում է ֆիքսված պատվաստումային գործընթաց: Այն կազմվում է, ելնելով յուրաքանչյուր օրվա համար մինչև 70 պատվաստում հաշվարկից,
- 14) օրացուցային ժամկետներում պատվաստումների պլանավորում,
- 15) հանրային իրազեկում և հաղորդակցություն ազգաբնակչության հետ:
71. Պատվաստումային գործընթացից առաջ պատվաստում իրականացնողը՝
- 1) ճշտում է բժշկի կողմից տրված պատվաստման թույլտվության առկայությունը,
 - 2) համեմատում է պատվաստանյութի սրվակի վրա առկա անվանումը բժշկի նշանակման հետ, ստուգում է տարբերակումը՝ մակնշումը, պատվաստանյութի պահպանման ժամկետը և սրվակի ամբողջականությունը,
 - 3) դիտողական գնահատում է պատրաստուկի որակը,
 - 4) միանվագ օգտագործման ինքնարգելափակվող ներարկիչներով կատարում է պատվաստում՝ տվյալ պատվաստանյութի հրահանգին համապատասխան:
72. Պատվաստումային գործընթացից հետո պատվաստում իրականացնողը.
- 1) յուրաքանչյուր պատվաստումից հետո տեղադրում է բազմադեղաչափ պատվաստանյութի սրվակը/շիկը սառնարան-պայուսակում, աշխատանքային օրվա վերջում՝ սառնարանում (ֆիքսված պատվաստումային կետում), իսկ վերականգնված պատվաստանյութի շիկը/սրվակը չօգտագործված դեղաչափով ոչնչացնում է այրման տուփում,
 - 2) աշխատանքային օրվա վերջում չօգտագործված փակ սրվակները/շիկները տեղադրում է սառնարանում,

- 3) կատարում է գրառումներ կատարված պատվաստումների վերաբերյալ հաշվառման ձևերում և պատվաստումների գրանցամատյանում՝ ըստ կատարված պատվաստումների հերթականության:
73. Իմունականխարգելման գործընթացում ներգրավված բուժաշխատողն ապահովում է.
- 1) պատվաստումից հետո անհրաժեշտության դեպքում անհետաձգելի բժշկական օգնության իրականացումը,
 - 2) անվտանգ պատվաստումների իրականացումը,
 - 3) սառցային շղթայի պահպանումը,
 - 4) փաստաթղթերի պատշաճ վարումը,
 - 5) ժամանակին և ամբողջական հաշվետվությունների կազմումը և ներկայացումը, հակացուցումների և հետպատվաստումային անբարեհաջող դեպքերի վարումը:
74. Պատվաստում իրականացնող բուժաշխատողի անվտանգությանը ներկայացվող պահանջներն են.
- 1) վիրուսային հեպատիտ Բ-ի դեմ բուժաշխատողի պատվաստման առկայություն՝ փաստագրված,
 - 2) միանվագ օգտագործման ներարկիչն օգտագործելուց հետո՝ առանց ասեղի վրա կափարիչ հագցնելու, նետում անվտանգ այրման տուփում:
75. Պատվաստում իրականացնող բուժաշխատողի մոտ պատահական ծակոցի դեպքում արյունը հետազոտվում է արտաընդերային ուղիով փոխանցվող վարակների նկատմամբ: Առաջին հետազոտությունը կատարվում է պատահարից անմիջապես հետո: Այդ հետազոտությամբ ստացված դրական պատասխանը խոսում է այն մասին, որ բուժաշխատողն արդեն վարակակիր է եղել և բացառում է տվյալ պատահարի հետևանքով նրա մասնագիտական վարակումը: Բացասական պատասխանի դեպքում կրկնակի հետազոտությունն իրականացվում է 1,3, 6 և 12 ամիս հետո:
76. Պատահական ծակոց արձանագրելիս կատարվում է գրանցում պատվաստումների գրանցամատյանում՝ համաձայն սույն հավելվածի Ձև 5-ի, Ձև 6-ի, Ձև 7-ի և ներկայացվում է հաշվետվություն:

ԲԱԺԻՆ 3

ՊԱՏՎԱՍՏՈՒՄՆԵՐԻ ՀԱԿԱՅՈՒՅՈՒՄՆԵՐ

ԳԼՈՒԽ 12

ՊԱՏՎԱՍՏՈՒՄՆԵՐԻ ՀԱԿԱՅՈՒՅՈՒՄՆԵՐԻ ՎԱՐՈՒՄ

77. Միակ բացարձակ հակացուցումը տվյալ պատվաստանյութի նախորդ դեղաչափից առաջացած անաֆիլաքսիան է՝ պատվաստանյութի կամ պատվաստանյութի որևէ բաղադրիչի նկատմամբ լուրջ ալերգաբանական ռեակցիա կամ անաֆիլաքսիա (տարածուն եղնջացան, սուլոդ շնչառություն, բերանի խոռոչի, կոկորդի այտուց, դժվարացած շնչառություն, հիպոթենզիա և շոկ):

78. Ժամանակավոր հակացուցումներ են՝

1) կապույտ հագի, դիֆթերիայի և փայտացման բաղադրիչ պարունակող համակցված պատվաստանյութերի համար՝ էնցեֆալոպաթիան (կոմա, գիտակցության մթազնում, երկարատև՝ 15 րոպեից ավել տևող ցնցումներ) նախորդ պատվաստումից հետո՝ 7 օրվա ընթացքում,

2) բնածին կամ ձեռքբերովի իմունադեֆիցիտները՝ պայմանավորված ձեռքբերովի իմունային անբավարարության համախտանիշով (այսուհետ՝ ՁԻԱՀ), օնկոլոգիական հիվանդություններով, քիմիաթերապիայով, ճառագայթային բուժումով, իմունասուպրեսիա առաջացնող դեղամիջոցների երկարատև կիրառումով (օրինակ՝ կորտիկոստերոիդներով 2 շաբաթ և ավել տևողությամբ՝ 2 մգ/կգ կամ 20 մգ/օրական պրեդնիզոլոն)՝ կենդանի պատվաստանյութերի (ԲՅԺ, ԿԿԽ, ԿԿ, Ռոտայի, տուլարեմիայի) համար,

3) սուր հիվանդությունները՝ միջին և ծանր ընթացքով, քրոնիկ հիվանդությունների սրացումը՝ բոլոր պատվաստանյութերի համար,

4) ԲՅԺ և ՎՀԲ պատվաստումները, եթե նորածինների մոտ առկա է ցածր քաշ՝ մինչև 2000գ,

5) հղիությունը՝ կենդանի պատվաստանյութերի դեպքում: Պատվաստումներ պետք է կատարել մինչև հղիության պլանավորումը՝ առնվազն 28 օր առաջ, որպեսզի առաջանա լիարժեք պաշտպանություն: Սակայն, եթե հղին պատվաստվել է առանց տեղեկացված լինելու հղիության մասին, ապա պատվաստումն անվտանգ է մոր և պտղի առողջության համար և հղիությունն ընդհատելու ցուցում չէ:

79. Պատվաստումների նախազգուշական միջոցառումներն են, եթե՝

1) անամնեզում նշվում է թրոմբոցիտոպենիա կամ թրոմբոցիտոպենիկ ծիրանացան, ապա կարմրուկի, ինչպես նաև կարմրուկի բաղադրիչով համակցված՝ ԿԿ և ԿԿԽ պատվաստումներից առաջ ստուգել թրոմբոցիտների քանակը,

2) մինչև պատվաստումը երեխայի վերհուշում (անամնեզում) նշվում է ինվազիանցիայի առկայություն, ապա տվյալ դեպքում Ռոտա պատվաստում չի կատարվում:

80. Պատվաստումների համար հակացուցում չհանդիսացող, սակայն հատուկ մոտեցումներ պահանջող վիճակներ են՝

1) մարդու իմունային անբավարարության վարակ (այսուհետ՝ ՄԻԱՎ) ունեցող մայրերից ծնված երեխաների կանխարգելիչ պատվաստումների կատարման մոտեցումները նույնն են, ինչ առողջ երեխաների դեպքում, բացառությամբ՝ կենդանի պատվաստանյութերով պատվաստումների, մասնավորապես՝

ա. ԲՅԺ-ի պատվաստումը կատարվում է՝ ծնվելուց հետո հնարավորինս շուտ,

բ. ԲՅԺ-ի, ԿԿԽ-ի, ռոտավիրուսի և պոլիոմիելիտի դեմ պատվաստումներն իրականացվում են, եթե երեխայի մոտ ՄԻԱՎ-ի կլինիկական ախտանշանները բացակայում են և իմունասուպրեսիան չափավոր է,

գ. պոլիոմիելիտի դեմ կանխարգելիչ պատվաստումներն իրականացվում են պոլիոմիելիտի ինակտիվացված պատվաստանյութով, եթե երեխայի մոտ առկա են ՄԻԱՎ-ի կլինիկական ախտանշաններ,

դ. ինակտիվացված/ադսորբցված, ռեկոմբինանտ, կոնյուգացված և հակատոքսինային պատվաստանյութերը հակացուցված չեն ՄԻԱՎ վարակակիրներին և իմունադեֆիցիտով անձանց,

- 2) հենոֆիլիա ունեցող անձանց ներարկման ձևով իրականացվող պատվաստումները կատարվում են արյան մակարդելիության գործոնների որոշումից հետո,
 - 3) արյան պատրաստուկներ ստացած անձանց կենդանի պատվաստանյութերով պատվաստումները, բացառությամբ բերանային պատվաստանյութերի, հետաձգվում են՝ համաձայն սույն հավելվածի Ձև 16-ի,
 - 4) կենդանի պատվաստանյութով պատվաստված անձը համարվում է չպատվաստված, եթե պատվաստումից հետո 2 շաբաթվա ընթացքում ներարկվել է իմունագործուն, շիճուկ կամ ամբողջական արյուն: Պատվաստումը կրկնվում է՝ հաշվի առնելով սույն հավելվածի Ձև 16-ի հետաձգումների ժամկետները,
 - 5) արյան պատրաստուկներ ստացած անձանց ինակտիվացված/ադսորբցված, ռեկոմբինանտ, կոնյուգացված և հակատոքսինային պատվաստանյութերով պատվաստումները չեն հետաձգվում,
 - 6) նախատեսվող պլանային վիրահատությունների դեպքում, պատվաստումներն անհրաժեշտ է կատարել վիրահատությունից առնվազն 28 օր առաջ՝ ԿՎՀ-ների նկատմամբ անընկալություն ձևավորելու նպատակով,
 - 7) վարակիչ կամ սոմատիկ հիվանդության դեպքում անձը պատվաստվում է առողջացումից անմիջապես հետո,
 - 8) քրոնիկ հիվանդության դեպքում պատվաստումը կատարվում է ռեմիսիայի շրջանում, թույլատրվում է պատվաստումը կատարել պահպանողական թերապիայի ներքո,
 - 9) հարաճուն նյարդաբանական հիվանդությունների դեպքում (հարաճուն էնցեֆալոպաթիա, չկառավարվող էպիլեպսիա) պատվաստումն իրականացվում է կլինիկական երևույթների կայունացման շրջանում:
81. Պատվաստումների հակացուցումներ չեն՝
- 1) սուր, թեթև շնչառական վարակները՝ սուրֆերիլ ջերմությամբ կամ առանց ջերմության,
 - 2) պերինատալ էնցեֆալոպաթիան (ոչ հարաճուն),
 - 3) պարզ տենդային ցնցումները,
 - 4) կայուն նյարդաբանական վիճակները՝ մանկական ուղեղային կաթվածը, Դաունի հիվանդությունը և այլն,
 - 5) ալերգիան, ասթման, էկզեման՝ ռեմիսիայի շրջանում,
 - 6) ալերգիա ձվի սպիտակուցի նկատմամբ՝ բացառությամբ ծանր ալերգաբանական ռեակցիաների, կարմրուկ, ԿԿ, ԿԿԽ, գրիպի դեմ պատվաստանյութերի համար,
 - 7) անեմիան,
 - 8) թիմուսի շողքի մեծացումը,
 - 9) բնածին արատները, այդ թվում՝ սրտի բնածին արատները (կոմպենսացված),
 - 10) պահպանողական թերապիան քրոնիկ հիվանդության ռեմիսիայի շրջանում, այդ թվում հակաբիոտիկներով բուժումը,
 - 11) քիմիաթերապիան և ճառագայթային բուժումը՝ ինակտիվացված պատվաստանյութերի համար,
 - 12) տեղային ստերոիդների օգտագործումը,
 - 13) անբարենպաստ ընտանեկան անամնեզը՝ ընտանիքում ալերգիայով հիվանդները, հետպատվաստումային անբարեհաջող դեպքերը, մանկական

հանկարծամահության համախտանիշը, ցնցումային համախտանիշը, իմունադեֆիցիտով անձը,

- 14) անամենեզում նախկինում կրած հիվանդություններ՝ սեպսիս, նորածինների հեմոլիտիկ հիվանդություն, անձի ԿՎՀ-ներով հիվանդացման փաստը,
- 15) կրծքով սնուցումը,
- 16) մոր հղիությունը,
- 17) նորածնային դեղնուկը՝ ֆիզիոլոգիական,
- 18) նախորդ պատվաստումից հետո՝ տեղային (այտուց, կարմրություն) և ընդհանուր (բարձր ջերմություն, անհանգստություն) անբարեհաջող դեպք, ինչպես նաև հարատև անմխիթար լացը,
- 19) վարակիչ հիվանդի հետ շփումը,
- 20) հիվանդության ռեկոնվալեսցենցիայի շրջանը:

ԳԼՈՒԽ 13

ԿԱՆԽԱՐԳԵԼԻՉ ՊԱՏՎԱՍՏՈՒՄՆԵՐԻ ԲԺՇԿԱԿԱՆ ՀԱԿԱՑՈՒՅՈՒՄՆԵՐԻ ԵՎ ՊԱՏՎԱՍՏՈՒՄՆԵՐԻՑ ՀՐԱԺԱՐՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԽՈՐՀՐԴԱՏՎՈՒԹՅՈՒՆ

82. Կանխարգելիչ պատվաստումների բժշկական հակացուցումների սահմանման, պատվաստումներից հրաժարականների քննարկման և խորհրդատվության հանձնաժողովները (այսուհետ՝ Հանձնաժողով) ձևավորվում են ԲԿ-ների տնօրենների հրամանով:

83. Կանխարգելիչ պատվաստումների բժշկական հակացուցումների և պատվաստումներից հրաժարումների վարումն իրականացվում է Հանձնաժողովի կողմից: Կանխարգելիչ պատվաստումներից հրաժարման դեպքում յուրաքանչյուր անձ կամ նրա օրինական ներկայացուցիչ ձեռագիր գրում է հրաժարական՝ համաձայն սույն հավելվածի Ձև 12-ի:

84. Կանխարգելիչ պատվաստումների բժշկական հակացուցումները և հրաժարումները գրանցվում են «Կանխարգելիչ պատվաստումների բժշկական հակացուցումների և պատվաստումներից հրաժարվողների մատյանում»՝ համաձայն սույն հավելվածի Ձև 17-ի:

85. Ծննդօգնություն իրականացնող ԲԿ-ներում չի ձևավորվում Հանձնաժողով: Կանխարգելիչ պատվաստումների բժշկական հակացուցումների և պատվաստումներից հրաժարումների վարումն իրականացվում է նեոնատոլոգի կողմից:

86. Հանձնաժողովի ձևավորման համար պատասխանատու է տվյալ ԲԿ-ի տնօրենը: Հանձնաժողովի կազմում ներառվում է 3 և ավել բժիշկ:

87. Հակացուցումների և հրաժարումների վերաբերյալ խորհրդատվության նպատակով մեկից երկու բժիշկ ունեցող ԲԿ-ները տվյալ մարզի մարզպետարանի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության կողմից կցվում են տարածքային առումով առավել մոտ տեղակայված 3 և ավելի բժիշկ ունեցող ԲԿ-ներին:

88. Միջին և ծանր ընթացքով սուր հիվանդությունների, քրոնիկ հիվանդությունների սրացման ընթացքում կանխարգելիչ պատվաստումների բժշկական հակացուցումների վարումն իրականացվում է տեղամասային բժշկի կողմից՝ անհրաժեշտության դեպքում ներկայացնելով Հանձնաժողովին:

89. Պատվաստումներից հրաժարվածները եռամսյակը մեկ անգամ հրավիրվում են տեղամասային/հաշվառման պոլիկլինիկա/ամբուլատորիա:

90. Հանձնաժողովի պարտականություններն են՝

1) հակացուցումների սահմանում, բացառությամբ՝ սուր ընթացքով վարակիչ և սոմատիկ (այդ թվում, թեթև՝ հազ և մրսաձուլություն) հիվանդությունների ժամանակ պատվաստումների հակացուցումների, որոնց վարումը կատարվում է բժշկի կողմից,

2) պատվաստումներից հրաժարվողների խորհրդատվություն և իրազեկում,

3) հակացուցումների հիմնավորման նպատակով անհրաժեշտության դեպքում՝ ախտորոշումը հաստատելու կամ ժխտելու նպատակով ուղեգրում հետազոտության կամ նեղ մասնագետի խորհրդատվության,

4) հանձնաժողովի նիստերի իրականացում, առնվազն՝ ամիսը մեկ անգամ, ըստ նախապես կազմած ժամանակացույցի (օր, ժամ),

5) հանձնաժողովը՝ մինչ «Հրաժարված» որոշում կայացնելը, հրավիրում է երեխայի ծնողներին, մեծահասակին՝ խորհրդատվության և իրազեկման նպատակով: Անձը համարվում է «հրաժարված», եթե համապատասխան խորհրդատվությունից և իրազեկումից հետո ծնողը կամ անձը դիրքորոշումը չի փոխում և ներկայացնում է գրավոր հրաժարական՝ նշելով տրամադրված խորհրդատվության և անձի չպատվաստվելու դեպքում վերջինիս վարակիչ հիվանդությամբ վարակվելու վտանգի վերաբերյալ իրազեկվածության մասին:

91. Կանխարգելիչ պատվաստումների բժշկական հակացուցումների և խորհրդատվության հանձնաժողովները ձևավորվում են հանրապետության բժշկական կազմակերպություններում՝ համաձայն վերջիններիս տնօրենների հրամանի: Ծննդօգնություն իրականացնող կազմակերպություններում հակացուցումների և հրաժարումների խորհրդատվությունն իրականացնում է նեոնատոլոգը:

92. Մարզերում 3 և ավել բժիշկ ունեցող բժշկական կազմակերպություններում կազմավորված Հանձնաժողովները հանդիսանում են որպես խորհրդատվական միավոր՝ կցված 1-2 բժիշկ ունեցող բժշկական կազմակերպությունների բուժաշխատողների համար՝ հակացուցումների սահմանման և հրաժարումների վերաբերյալ խորհրդատվության նպատակով: 1-2 բժիշկ ունեցող կազմակերպություններում Հանձնաժողովի կազմավորման անհրաժեշտություն չկա: Վերջիններս հակացուցումների և հրաժարումների վերաբերյալ խորհրդատվության նպատակով մարզպետարանի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության կողմից կցվում են տարածքային առումով առավել մոտ տեղակայված 3 և ավել բժիշկ ունեցող բժշկական կազմակերպությանը:

93. Դիսպանսեր հսկողության տակ գտնվող անձանց կանխարգելիչ պատվաստումների հակացուցումների սահմանման համար Հանձնաժողովի նիստերի ժամանակ հրավիրվում են նեղ մասնագետներ՝ ըստ անհրաժեշտության:

94. Բուժաշխատողի կողմից չհիմնավորված հակացուցումների սահմանումը և պատվաստումների հետաձգումը համարվում է պատվաստումային գործընթացի խախտում:

95. Բուժաշխատողը կանխարգելիչ պատվաստումներից հրաժարվողի հետ տանում է շարունակական իրազեկման, խորհրդատվական աշխատանքներ վարակիչ հիվանդությունների կանխարգելման գործընթացում պատվաստումների՝ որպես արդյունավետ միջոցի նշանակության և կարևորության վերաբերյալ:

96. Բժշկական հակացուցումների և պատվաստումներից հրաժարվողների վերաբերյալ ներկայացվում է ամսական վարչական վիճակագրական հաշվետվություն:

ԲԱԺԻՆ 4

ԲԺՇԿԱԿԱՆ ԻՄՈՒՆԱԿԵՆՍԱԲԱՆԱԿԱՆ ՊԱՏՐԱՍՏՈՒԿՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

ԳԼՈՒԽ 14

ԲԺՇԿԱԿԱՆ ԻՄՈՒՆԱԿԵՆՍԱԲԱՆԱԿԱՆ ՊԱՏՐԱՍՏՈՒԿՆԵՐԻ ԿԻՐԱՌՄԱՆ ՎԱՐՈՒՄ

97. Բժշկական իմունակենսաբանական պատրաստուկների (այսուհետ՝ ԲԻԿՊ) կիրառման ընդհանուր պահանջներն են.

1) պատվաստում իրականացնող կազմակերպություններում տնօրենի կողմից նշանակել ԲԻԿՊ-ների վարման պատասխանատու՝ ԲԻԿՊ-ների պահանջարկի որոշման, հաշվառման, պլանավորման, ինչպես նաև սառնարանային սարքավորումների շահագործման և պատվաստանյութերի ստացման, պահպանման ու տեղափոխման, բժշկական թափոնների հավաքման ու ոչնչացման համար,

2) ԲԻԿՊ-ների անվտանգ կիրառումը բոլոր մակարդակներում իրականացնել Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի 2019 թվականի փետրվարի 14-ի 361-Ա հրամանով հաստատված պատվաստանյութերի արդյունավետ կառավարման գործողությունների ստանդարտ ընթացակարգերի համաձայն,

3) ապահովել պատվաստանյութերի և պատվաստումների օժանդակ պարագաների 25% մշտական պահուստային քանակություն,

4) ապահովել վթարային համակարգերի նախապատրաստվածություն (ահագանգման համակարգ, հոսանքի այլընտրանքային աղբյուր, վթարային/արտակարգ իրավիճակում պատվաստանյութի տեղափոխման պլան/պայմանագիր),

5) ապահովել սառնարանային սարքավորումների շահագործման տեխնիկական վիճակի կանոնավոր հսկողությունը, սառնարանային սարքավորումների անսարքությունների պատճառների գրանցումը (տեխնիկական պատճառներ, լրացուցիչ պահեստամասերի բացակայություն, անձնակազմի անպատրաստվածություն), դրանց ժամանակին վերացումը:

98. ԲԻԿՊ-ների տարեկան, եռամսյակային, ամսական պահանջարկի (ըստ ամիսների) հաշվարկը կատարվում է ԲԿ-ների կողմից՝ ըստ ԲԻԿՊ-ների պլանավորման հայտի՝ համաձայն սույն հավելվածի Ձև 18-ի:

99. ԲԻԿՊ-ների պահանջարկի հայտը կազմվում է ԲԿ-ների իմունականխարգելման գործընթացի պատասխանատուի կողմից:

100. ԲԻԿՊ-ների վարման պատասխանատու անձը.

- 1) մասնակցում է պատվաստանյութերի ամսական, եռամսյակային, տարեկան պահանջարկի պլանավորմանը,
- 2) ստանում, գրանցում և պահեստավորում է ԲԻԿՊ-ները,
- 3) կազմում և ներկայացնում է ամսական հաշվետվություն ԲԻԿՊ-ների ստացման, ծախսի և պահեստում առկա քանակների վերաբերյալ մինչև հաջորդ ամսվա 5-ը,
- 4) վարում է ԲԻԿՊ-ների, ինչպես նաև պատվաստում իրականացնելու համար անհրաժեշտ օժանդակ պարագաների խոտանման գրանցամատյանը՝ համաձայն սույն հավելվածի Ձև 21-ի և կազմում է արձանագրություն: Արձանագրությունը՝ համաձայն սույն հավելվածի Ձև 22-ի, համարակալվում է, կազմվում՝ 2 օրինակից, հանձնաժողովի անդամների կողմից ստորագրվում, տնօրենի կողմից կնքվում և պահվում է առանձին թղթապանակում,
- 5) վարում է ԲԻԿՊ-ների պահպանման սառնարանների, սառնարան-պայուսակների, թերմոկոնտեյներների գույքագրման և շահագործման մատյանը՝ համաձայն սույն հավելվածի Ձև 23-ի,
- 6) կազմում է տարեկան տեղեկատվություն գույքագրման և շահագործման վերաբերյալ՝ համաձայն սույն հավելվածի Ձև 24-ի:

101. Անվտանգ և արդյունավետ պատվաստումների իրականացման համար ԲԻԿՊ-ները վարող պատասխանատու անձը՝

- 1) ստուգում է աշխատանքային օրվա սկզբում և վերջում սառնարանի ջերմաստիճանը, ջերմաչափով և էլեկտրոնային գրանցման սարքով, ինչպես նաև զգայորոշիչների վիճակը, և գրանցում «Բժշկական իմունակենսաբանական պատրաստուկների պահպանման ջերմային ռեժիմի հսկողության գրանցամատյաններում»՝ համաձայն սույն հավելվածի Ձև 25-ի,
- 2) սառնարանից հանում է տվյալ օրվա համար պլանավորված անհրաժեշտ քանակի պատվաստանյութերը և նույն արտադրողի կողմից արտադրված լուծիչները,
- 3) գնում է պատվաստանյութերը և լուծիչները՝ դրանց ամբողջականությունը, պիտանելիության ժամկետը, ՊՇՑ-ն՝ շշիկի/սրվակի վրա նրանց առկայության դեպքում,
- 4) ջերմային ռեժիմի խախտման դեպքում (սառեցում/տաքացում), գնահատում է պատվաստանյութի վիճակը՝ թափահարման թեսթով կամ ՊՇՑ-ով: Թափահարման դրական թեսթի առկայության և/կամ ՊՇՑ-ի 3-րդ և 4-րդ աստիճանի դեպքում խոտանում է պատվաստանյութը,
- 5) սառցային տարրերը նախապես հանում է սառցարանից, թողնում սենյակային ջերմաստիճանում 30-60 րոպե տևողությամբ կամ 2-3 րոպե պահում է հոսող ջրի տակ՝ մինչև թափահարելիս սառցային տարրի մեջ ջրային մասի առաջացումը (ջրի շրխկոցի զգացում), չորացնում՝ մինչև սառնարան-պայուսակ կամ թերմոկոնտեյներ տեղադրելը,
- 6) սառցային տարրերը դասավորում է սառնարան-պայուսակի մեջ բոլոր կողմերով,

- 7) տեղավորում է պատվաստանյութերը և լուծիչները սառնարան-պայուսակի սառցային տարրերի կենտրոնում տուփի մեջ՝ բացառելով պատվաստանյութերի և սառցային տարրերի հպումը,
 - 8) սառնարան-պայուսակի վերին մասում տեղադրում է պարալոն/սպունգ՝ պատվաստանյութերի սրվակների/շիկների համար նախատեսված անցքերով, հերմետիկ փակում սառնարան-պայուսակը,
 - 9) բազմադեղաչափ շիկի/սրվակի վրա բացելու/վերականգնելու պահին նշվում է բացման/վերականգնման ամսաթիվը և ժամը:
102. Պատվաստանյութի և լուծիչի շիկի/սրվակի վրա պիտանելիության ժամկետի միայն տարի և ամիս նշման դեպքում պատվաստանյութը և լուծիչը օգտագործվում է մինչև շիկի/սրվակի վրա նշված ամսվա վերջին օրը ներառյալ, իսկ տարի, ամիս և օր նշման դեպքում՝ նշված օրը ներառյալ:
103. ԲԿ-ներում պատվաստանյութերի բաց սրվակների/շիկների օգտագործման պահանջներն են՝
- 1) ԲՅԺ, ԿԿԽ, ԿԿ, կարմրուկի, տուլարեմիայի, ինչպես նաև բազմադեղաչափ պատվաստանյութերը բացվում կամ վերականգնվում են առաջին այցելուի հետ, սրվակի/շիկի վրա նշելով բացման/վերականգնման օրը և ժամը,
 - 2) լուծիչով վերականգնելու համար կիրառվում է միանվագ օգտագործման ներարկիչ (նախապես ստուգվում է դրանց հերմետիկությունը և պիտանելիության ժամկետը), ԿԿԽ պատվաստանյութի դեպքում լուծիչով լցված ներարկիչի ասեղը մտցվում է պատվաստանյութի շիկի մեջ և լուծիչն ամբողջությամբ դանդաղ մղվում է շիկի մեջ (չի կարելի թափահարել),
 - 3) լուծելուց հետո շիկից անմիջապես հանվում է ասեղով ներարկիչը՝ պատվաստանյութի երկրորդային աղտոտվածությունը բացառելու համար,
 - 4) օգտագործված ներարկիչն (ասեղով) անմիջապես զցվում է անվտանգ այրման տուփի մեջ,
 - 5) վերականգնման համար օգտագործված ասեղով պատվաստում չի կատարվում և նույն ասեղից այլ ներարկիչով պատվաստանյութ չի հավաքվում,
